

չած լինէին, այսօր ևս այնտեղ թէև վիճակը գեղեցիկ չէր լինի—որովհետև տաճիկ պաշտօնեաների զեղծումները և քիւրդ ազաների բռնութիւնը տարիներէ ի վեր գրեթէ անտանելի էին դարձրել Հայերի կացութիւնը—բայց գոնէ չէին փորձի Հայաստանի քրիստոնեայ ազգաբնակութիւնը արեան ծովի մէջ խեղդելու և հազարաւոր զիւղեր ու քաղաքներ կողոպտելով ու բռնի կրօնափոխ անելով, քրիստոնէութեան անունը վերացնելու այդ աշխարհից, Այն ամենը, ինչ որ եւրոպական լրագիրներում գրուել է Հայերի ապստամբութեան և անգլիական գործակալների խռովարար ու գրգռիչ ազդեցութեան մասին՝ տաճկաց սուտերի գործարաններից է ելել, տաճիկ դեսպանութեան արժուն հսկողութեան ներքոյ հարիւրաւոր կեղծ լուրեր ու տեղեկագիրներ մատակարարելով հեռագրական գործակալութիւններին ու համաշխարհային թերթերին՝ գոհացումն տալու համար Եւրոպայի պահանջներին, որ կատարուած անուրանալի եղելութիւնների պատճառն էր հարցնում, եթէ քրիստոնեայ մեծ պետութիւնները իրենց համակրութեամբ բաղդաւորեցնէին Ցաճկաստանի այն նահանգները, որոնց բնակիչներն առաւելապէս յոյներ են՝ կոտորածները ճիշդ նոյն եղանակով յունական նահանգներում տեղի կունենային, Իսկ մահմեդական գաղափարներով բոլորովին իրաւացի կը լինէր այդ, որովհետև իսլամի օրէնքը թոյլ չէ կարող տալ երբէք, որ վեհափառ Սուլթանի մահմեդական և քրիստոնեայ հպատակներն հաւատար իրաւանց տէր լինին, Այդ պատճառաւ տասն և ութ տարիներէ ի վեր Հայաստանի համար խոստացուած բարենորոգումները, քանի որ այդ գաւառների աւերմամբ նոքա իրօք անիրագործելի են դարձել՝ թղթի վերայ կմնան, թէև Սուլթանը նոցա գործադրելու համար պատուոյ խօսք է տուել. իսկ պետութիւնների կողմից Սուլթանի հետ նոր յայտագրեր փոխանակելը հայկական հարցի մասին մի անվայել խաղ է, մանաւանդ երբ տաճիկ պաշտօնեաների մինչև երկինք բողոքող եղեռնագործութիւնները Հայաստանում անպատիժ են մնացել մինչև այժմ և կմնան, Օսմանեան պետութեան անբարեկարգելի լինելը վաղուց ապացուցուած է...

Աւրիշ միջոց չէ մնում, բայց եթէ պետութիւններն իրենց վերայ առնեն ինամակալութեան բոլոր պատասխանատուութիւնը, որ նոքա արդէն գործ են զնում Թիւրքիայի վերաբերմամբ:



ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

Խ Ա Չ Ի Ն Ե Ր Գ Ո Յ

Գիշերոսան այս սեւ արեւի խաար շվհատեցնէ թող քեզ իմ եղբայր. վառ անտաքեր օրոսայ է նշան: Այդ արշալուսի ընկերն անքաժան

Չնս տեսել, ինչպէս միայլ փոթորկին Յաջորդում է միշտ լուսագեղ երկին, եւ քաղցր ժպտով արեւը պայծառ Գգտում է կրկին սար, դաշտ ու անտառ ...

Խաշիղ տակ ճնշուած դարձեալ դու յուսմ— փրկութեան քո ժամս անշուշտ պիտի գայ. Արեանք ներկուեցաւ սուս զողորման, Ապա թէ ծագեց սուրբ օրն յարութեան:

Յ. ՅՈՒՆԱՆՈՍԻԱՆ

